

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



արուստ է և բազմաբովանդակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի կյանքը, սկսած գիտակցական առաջին տարիներից մինչև Սսի կաթողիկոսական Աթոռը, որտեղ կնքեց իր մահկանացուն երկարատև ու ծանր հիվանդությունից հետո: Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի մահով հայ ժողովուրդը կորցնում է երևելի մի եկեղեցականի, որը հասարակական իր բեղուն գործունեությամբ ու հաղթողական մեծ վաստակով արժանավոր տեղ ունի հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ:

Բնությունը դարմանալի ուժ էր կուտակել այդ նիհարակալմ, ջղոտ մարդու մեջ, որ ֆիզիկապես թույլ էր երևում: Բայց գիտության ծարավը, ստեղծագործելու տենչը, հասարակական գործունեության մղումը — ներքին հոգեկան այս ուժերը կարծես երաշխիք էին ստեղծել նրա մեջ կեն դարուց ավելի տեղը գիտական-հասարակական ստեղծագործական բեղուն և հուզումնալի մի կյանք բոլորելու համար:

Գարեգին Կաթողիկոսի կյանքը ուսանելի լինելով հանդերձ, կրկնությունն է երևելի մեր այն մարդկանց կյանքի, որոնք դեռ վաղ հասակից, սրբազան ներշնչմամբ, իրենց կոչված են զգացել հասարակական դեր խաղալու մեր ժողովրդի պատմության մեջ:

Ինչքան մեծ ոգորում, կամքի ուժ, համատվություն ու զոհողություն, անհուն նվիրվածություն էր հարկավոր նախասովետական շրջանի այն պատանու համար, որ, զրկված նյութական միջոցներից, առաջին անգամ տառերի ճանաչումից հետո, ստիպված էր ուսման մեջ առաջանալու ուղի բանալ: Այժմ, սովետական օրերին, երբ ուսման ու գիտության դռները լայնորեն բացվել են ժողո-

վրդական մեծ զանգվածների համար, Գարեգին Կաթողիկոսի կենսագրությունը, որ մի տարբերակ է նախասովետական շրջանի բազմաթիվ այլ մարդկանց կենսագրությունների, հեքիաթի նման, հրաշապատում դրվագներով մի վեպ է թվում:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը ծնվել է չքավոր գյուղացու ընտանիքում. «Ծանրաբեռնեալ գոյով խնամատարութեամբ աղքատիկ գերդաստանի իմոյ և շունելով հնարս ինչ կրթել տալոյ զորդիս իմ ըստ հայրական սեպուհ պարտուցս... զի բնկայցի երեքտասանամեայ որդին իմ Գարեգին Յովսէփեան ի Գէորգեան ճեմարան»։— 1882 թվականի սեպտեմբերի 10-ին այս խոսքերով է դիմել Գարեգին Կաթողիկոսի հայր Կարապետը Գեորգ Գ. Կաթողիկոսին՝ խնդրելով իր որդուն թույլ տալ սովորելու Գեորգյան Հոգևոր ճեմարանում:

Այս դիմումը, որ գրված է Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի ծննդավայր Մարաղա գյուղում (Ղարաբաղ), տասներեք տարեկան Գարեգինի շարագրանք չէ և ոչ էլ նրա հոր, որն անգրագետ է եղել: Հավանական է, որ այդ դիմումը գրել է Հովսեփյան ընտանիքին Գարեգին Կաթողիկոսի մոր կողմից ազգական Անտոն վարդապետը, որ մեծ դեր է խաղացել Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի դաստիարակության գործում:

Դիմումի մեջ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի ծննդյան թվականը սխալ է ցույց տրված: Իրականում, պատահի՞ր Գարեգինը 1882 թվականին եղել է ո՛չ թե տասներեք, այլ տասնհինգ տարեկան: (Մենք նկատի ունենք նրա ծննդյան վկայականը, որից երևում է, որ նա ծնվել է 1867 թվականին):

Մինչև ճեմարան մտնելը, Գարեգինը մի երկու գյուղական վարժարան էր հաճախել կրթական այն օջախներից, որ այն ժամանակ գոյություն ունեին Ղարաբաղում և Հայ-

յաստանի շատ վայրերում, որոնք բացվում էին պատահաբար, գործում էին անկանոն և ունեին ուսման խիստ սահմանափակ շրջանակ — տառաճանաչություն և ժամագրքի ընթերցում:

Ավելի ուշ, 1876 թվականին, ուսումը «կատարելագործելու» նպատակով, պատանի Գարեգինին Ամարասի դպրեվանքն են տանում, որտեղ նա հայերենի հետ սովորում է նաև ռուսերեն և թվաբանություն: 1877 թվա-



Գարեգին վարդապետ Հովսեփյան

կանին արդեն Գարեգինն ընդունվում է Շուշու թեմական դպրոց: Բայց Շուշում նա երկար չի մնում — ընդամենը երկու տարի — որովհետև հայրը՝ Կարապետ Հովսեփյանը, ի վիճակի չի լինում իր որդու թոշակն ու դպրոցական ծախսերը հոգալու:

Թափառումների այս պատմությունը, որ իրականում մի ամբողջ ողբիսական է եղել պատանի Գարեգինի համար իր ուսման ծախսերը հագեցնելու ճանապարհին, վերջ է գտնում այն դիմումով, որ իր հայրն է ուղղում Գեորգ Գ. Կաթողիկոսին և որից մենք վերևում բերինք մի հատված: Այդ դիմումով 1882 թվականին Գարեգինն ընդունվում է Գեորգյան ճեմարան (նախապես իբրև

երթնեկ, երկրորդ տարուց սկսած իբրև դի-շերթթիկ), որից հետո նրա առաջ լայն ճանապարհ է բացվում ուսման համար:

Մարաղայից էջմիածին, տեր-թողիկյան դպրոցից Գեորգյան ճեմարան, Իրոք, դա դժվարին մի այնպիսի ճանապարհ էր, որին հասնելու համար պետք էր ունենալ Հանգուցյալի համառությունը և հաստատակամությունը:

Հայաստանի Պետական մատենադարանում պահպանվում է Գարեգին Հովսեփյանի ավարտական վկայագիրը — մրցագիրը — ուր բոլոր առարկաների ղնահատականները, առանց բացառության, նշված են «գովելի» կամ «չոյժ գովելի»: Լսարանի առաջին տարիներից սկսած նա աչքի է ընկել գիտական-ստեղծագործական իր ընդունակություններով բանասիրական աշխատանքներում:


Ճեմարանի աշակերտության տարիներին, 1886 թվականին, երբ նա Զ. դասարանը ավարտելով Ա. լսարան էր փոխադրվում, սամուվա արձակուրդներին մասնակցում է Մանուկ Աբեղյանի գլխավորությամբ կազմակերպված գիտական արշավին՝ Արագածի վրայով դեպի Անի: Այդ շրջագայությունը, ինչպես նշել է ինքը, անջնջելի տպավորություն է թողնում ուսանող Գարեգինի վրա և բախտորոշ դեր է խաղում ապագա հնագետ-բանասերի կյանքի ուղին գծելու խնդրում:

Լսարանական Բ. կուրսում, 1899 թվականին, Գարեգին Հովսեփյանն իր մոտիկ ընկերոջ՝ ներկայիս Ամենայն Հայոց Հայրապետ Գեորգ Զ. Կաթողիկոսի, ճեմարանի վերատեսուչ Նահապետյանի և մի քանի այլ ընկերների հետ ձեռնադրվում է սարկավազ, դառնալով էջմիածնի միաբանության անդամ:

Կուսակցությունը, հոգևոր կոշտը Գարեգին սարկավազի համար նշանակում էր նվիրումն, ամբողջական նվիրումն հավատին և գիտությանը: Իր կամքի ուժով նա թե՛ մեկ և թե՛ մյուս ասպարեկում քաջ առ բաջ բարձրացավ դեպի վեր, դեպի կատարելություն:

Գեո ճեմարանը չավարտած, նա աչքի ընկավ իբրև ապագա երևելի եկեղեցական դործիչ և բանասեր: Դրանով պիտի բացատրել, որ ճեմարանն ավարտելուց երկու տարի հետո Գարեգին Հովսեփյանը, որպես սան Հայոց բարեգործական միության, էջմիածնի կողմից ուղարկվում է Գերմանիա՝ սովորելու:

1892 թվականից մինչև 1896 թվականը Գարեգին սարկավազ Հովսեփյանը Գերմանիայում է. Լայպցիգի, Բեռլինի և Հալեի համալսարաններում, սովորում է աստ-



վածաբանություն և հնագիտություն: Անցնում են ուսանողության շորս տարիներ: Տքնաջան աշխատանքը տալիս է իր լավ արդյունքները. Գարեգին Հովսեփյանը հաջողությամբ ավարտում է բարձրագույն կրթությունը՝ ստանալով գիտության դոկտորի կոչում:

Գարեգին սարկավազ Հովսեփյանին անհամբեր սպասում էին ձեմարանում. դեռևս ավարտական քննությունները չհանձնած,



Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյան

կարգադրություն է ստացվում էջմիածին, որ նա նշանակվել է ձեմարանի դասախոս: Սակայն Գարեգին սարկավազ Հովսեփյանը անկեղծ վրդովմունքով հրաժարվում է այդ պաշտոնից. «Ես չեմ կարող մի դասագիրք վերցնել և նրանով դասախոսել: Պարտքի զղացման հետ խաղալ չի լինիլ» — պատասխանում է նա ձեմարանի վերատեսուչ Կոստանյանի առաջարկությանը:

Որպես դասախոս, Գարեգին Հովսեփյանը օրինակելի է եղել իր ավանդած նյութի

իմացությամբ և բարեխղճությամբ: Այդ գիտեն բոլոր նրանք, ովքեր նրան աշակերտել են:

Ճշմարիտ գիտական մագդուն հատուկ այդ բարեխղճությունը պահանջում էր անբուն գիշերների լարված աշխատանք, որն անդրադառնում էր արտասահմանում սովորելու ընթացքում տքնությունից հյուսված նրա առողջության վրա: Նա ստիպված է լինում դադարեցնել դասախոսությունները: Խրիմյան Կաթողիկոսը, հանդամանքից օգտվելով, նրան նշանակում է Թբիլիսիի հայոց թեմի առաջնորդական տեղապահ: Նրիտասարգ Գարեգին վարդապետը 1900 թվականին տեղափոխվում է Թբիլիսի:

Թբիլիսիի նոր աշխարհ էր, գործունեության նոր ասպարեզ: Այստեղ հանդես պիտի գար եկեղեցական գործիչ Հովսեփյանը: Այստեղ նա մի նոր քննություն էր տալու և նա այդ տվեց արդարացնելով բոլոր այն հույսերը, որ էջմիածինն ու կաթողիկոսը կապում էին նրա հետ: Նա կարճ ժամանակվա ընթացքում իր նվիրված աշխատանքով այնպիսի համակրություն է ձեռք բերում, որ Թբիլիսիի թեմից ցանկություն է հայտնվում նրան առաջնորդ նշանակելու մասին: Մոտ տարի ու կես է մնում նա Թբիլիսիի առաջնորդական տեղապահության պաշտոնում և այդ կարճ ժամանակի ընթացքում Գարեգին վարդապետ Հովսեփյանը դրսևորում է եկեղեցական գործիչ ձեռնհասություն ու հմտություն: Նրա օրով բազմաթիվ չլուծված ու վիճելի խնդիրներ հարթվում են և թեմի կյանքը բարեկարգ վիճակ է ընդունում:

Թբիլիսիի առաջնորդական կարճատև տեղապահությունից հետո նա արդեն դառնում է հասարակական հանրածանոթ դեմք՝ հարյուրի ու սիրելի: Նա այժմ և՛ հեղինակ է, և՛ դասախոս, և՛ քարոզիչ: Բայց նա ունի նաև վարչական ընդունակություն: Նա այդ ընդունակությունը հանդես է բերում հասկացելու նրանում՝ թեմական տեսչի պաշտոնում (1901—1904 թ. թ.), որտեղ թե՛ դասախոսում է, թե՛ վարում դպրոցը, հարթում է վեճերը և դպրոցը դնում օրինակելի դրության մեջ:

1905 թվականին Խրիմյան Կաթողիկոսը նրան նորից ձեմարան է բերում, այս անգամ որպես վերատեսուչ:

Ձեմարանի վերատեսչության ժամանակաշրջանում, ինչպես և նրանից հետո, մենք տեսնում ենք նրան հայագիտության հանդեպ հրաբուրդ լցված: Նա վերադառնում է իր սիրած ձեռագրերին, պրպտում է և ուսումնասիրում: Հասարակական և վարչական կյանքից հետո, հայագիտական աշխա-

տանքով զբաղվելը նրա համար կաղզուրիչ, բուժիչ նշանակություն է ունենում: Նա աշխատում է գիշեր ու ցերեկ, հոգվածներ է դրում «Արարատ»ին, որի խմբագիրն է նշանակվում 1906 թվականին:

1908 թվականից Գարեգին վարդապետին մենք տեսնում ենք Հոփսիմի վանքում, որի վանահայրն էր, թաղված գրքերի ու ձեռագրերի, բանասիրական անհամար նյութերի շեղջի մեջ:



Գարեգին արևելասկոպոս Հովսեփյան

Չհաշված Իզմիրլյան Կաթողիկոսի օրով խորհրդականի կարճատև պաշտոնը, նա այլևս եկեղեցական աչքի ընկնող պաշտոն չի տանում մինչև 1914 թվականը, երբ նա նորից նշանակվում է իր սիրած Դեմաթանի տեսուչ, որպիսի պաշտոնում մնում է մինչև 1917 թվականը:

1908-ից 1914 թվական ընկած տարիները Գարեգին վարդապետի գիտական շրջագայությունների, պրպտումների և ուսումնասիրությունների ամենաեռուն շրջանն են ընդգրկում: Հայաստանի և նրա սահմաններից հեռու գտնվող վանքերը, հնությունները, գրադարանները Գարեգին Հովսեփյանի համար այն ծաղիկներն են, որոնցից դիտության մեղվաջան մշակը ապագա ստեղ-

ծագործությունների համար նյութ է հավաքում:

Մինչև Գերմանիա ուսանելու գնալը, նա արդեն ուներ իր բանասիրական առաջին երախայրիքը՝ հանդիսացող երկու աշխատությունները՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» և «Սասմա ծոն», երկուսն էլ 1892 թվականին հրատարակված:

Նա այժմ արդեն բաղմաթիվ հոգվածներից բացի ունի նոր աշխատությունների համար պատրաստի նյութ և շարունակում է իր պրպտումները: Նրան հարկավոր են նոր փաստեր, նոր աղբյուրներ, դրանք կարելի է գտնել այլ վայրերում, տարբեր երկրներում:

Հայաստանի վանքերն ու էջմիածնի մատենադարանը չեն բավարարում նրա ուսումնասիրությունների լայն շրջանակին: Նրա հայացքն ուղղվում է Հայաստանից դուրս գտնված պատմական հնությունների կողմը: Գրքերի գյուտի 1500—ամյակի կապակցությամբ և ուսա Կասերական հնագիտական ընկերության հովանավորությամբ (որին նա անդամ էր ընտրված 1903 թվականին) նրան հաջողվում է մեկից ավելի անգամներ հեռավոր ուղևորություններ կատարել: Այդ ուղևորությունների ընթացքին (1911 և 1914 թ. թ.) նա այցելել է Երուսաղեմ, Կոստանդնուպոլիս, Սամսոն, Ամասիա, Թոգատ, Սեբաստիա: Գիտական այս ուղևորություններից նա վերադառնում է առատ նյութերով բեռնված, որոնք հարստացնում են իր հետագա երկասիրությունների փաստական կողմը, երկասիրություններ, որոնց մեջ «Խաղրակյան և Կաթողիկոսի հայոց պատմության մեջ» աշխատությունը իր գլուխգործոցն է համարվում: Գարեգին Հովսեփյանի գրչին են պատկանում մեր հին զբարության ու արվեստների նվիրված բազմաթիվ աշխատություններ, որոնք նշանակելի ավանդ են հայկական բանասիրական դրականության մեջ, ինչպես «Ռոստամ Զայ», «Խոսրովիկ քաղցամանի», «Մխիթար Սասնեցի», «Ջաղավանից ժողով», «Թումա Մեծոփեցու կյանք», «Մխիթար Այրիվանեցի», «Գրչության արվեստը հին հայոց մեջ», «Հավուց Թադի Սմեհափրիկը» և այլն: Հայկական մանրանկարչության վերաբերյալ նրա հոգվածները և մանրանկարչության քարտեզը, որ նա պատրաստել էր տպագրության, փայլուն վկայություններ են արվեստի այդ ճյուղի ուսումնասիրության համար թափած անդուլ որոնումների ու տքնության:

Մեծ է Հանգուցյալի ժողովրդանվիր դործունեությունը համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանից եկած գաղթականներին օգնություն կաղմակերպելու, նրանց վերբերը դարմանե-

լու և մխիթարելու գործում: Պետք է հիշել, որ նա ընդհանրապես զգայուն սրտի տեր էր և միշտ մոտ կանգնած ժողովրդին հասցված և միշտ բուժելու գործին: Դեռևս 1894 թվականին, Բեռլինում ուսանող եղած ժամանակ, ամառային արձակուրդը փոխանակ ֆարիզում անցկացնելու, նա գնում է Բիլեֆիլտ՝ ուսումնասիրելու այնտեղ գտնվող աղքատախնամ հաստատությունը՝ իր սիրած ժողովրդին օգտակար լինելու ցանկությամբ: Նա այնտեղից էլ միաժին՝ Վահան հայր սուրբին ուղղած մի նամակում հետևյալն է գրել. «Բայց հենց իմ կրթության համար սա մի գեղեցիկ դպրոց է շարքաշ և տոկոս կյանքի սովորելու. ամենահասարակ ծառայություններն էլ պարտավոր ենք ամենքս կատարել—սենյակներ մաքրելուց, հատակներ լվանալուց սկսած մինչև հիվանդների անկողիններ հարգարելը, հոգևոր մխիթարություն մատակարարելը...»:

Անկաշառ, մաքուր գիտասրտությունը նրա համար հոգեկան առաքինություն էր և դրանով առաջնորդվելով, աշխատել է Համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով հայրենի երկրից բռնազաղթված արևմրտահայ զանգվածների համար օգնություն կազմակերպելու նպատակով ստեղծված Եղբայրական օգնության աշխատանքներին, մինչև իսկ եղել է այդ կազմակերպության նախագահը:

Սովետական կարգերի հաստատման տարիներին Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը եկեղեցական գործեր վարելու հետ միաժամանակ (նա էլ միաժամին Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ էր և միաբանական ժողովի նախագահ, իսկ 1927 թվականից սկսած՝ Ղրիմի և Նոր-Նախիջևանի թեմերի առաջնորդ), չի մոռանում գիտության աշխատողի իր կոչումը: Ալեգարդ եպիսկոպոսը մասնակցում է «Բանբեր» գիտական հանդեսի հրատարակությանը, գրում է հոդվածներ, կարդում դասախոսություններ, գիտական շրջագայություններ կատարում և շարունակ դեպքում իր ուսումնասիրությունների նյութերի մշակումով:

1934 թվականին Գարեգին եպիսկոպոսը նշանակվում է Հայրապետական լիազոր պատվիրակ Սփյուռքի հայության մեջ: Աստանդական, հայրենաբաղձ հայ խլյակներին՝ Սիրիայից մինչև Ֆրանսիա, Բալկաններին մինչև Ամերիկա, ամենուր տանում է Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնը և կապում նրանց սրտերը զարթնող ու վերաշինվող Սովետական Հայրենիքին: Սփյուռքի հայությունը նրա բերանից լսում է ճշմարիտ խոսքեր Հայրենիքի անդադրում վերելքի, ժողովրդի բարեկեցության, կուլտուրայի

ու գիտության ծաղկման մասին՝ Սովետական մեծ Միության եղբայրական ընտանիքում: Սփյուռքի հայությունը Սրբազանի բերանից լսում էր և ճշմարիտ խոսքեր Մայր Աթոռի մասին: Վեհափառ Հայրապետի նվիրակ Գարեգին Եպիսկոպոսի ձառերը, դասախոսությունները հրձվանքի զգացմունքներով էին լցնում Սփյուռքի հայության սրտերը և փակում ստության բերանները: Արտասահմանի հայությունը Գարեգին Եպիսկոպոսի



Գարեգին Ա. Կարօղիկոս Հովսեփյան

պոսի մեջ տեսնում էր ազգի պահպանության գործին աջնվորեն նվիրված հոգևորականին, հայկական կուլտուրայի պաշտպանին: Անտարակույս, նրա կատարած ազգօգուտ մեծ աշխատանքներին պիտի վերագրել այն, որ 1938 թվականին Հովսեփյան Սրբազանը ընտրվում է Հյուսիսային Ամերիկայի Հայոց թեմական առաջնորդ, և որտեղ իր վեց տարիների նվիրված, անդուլ աշխատանքով բարձրացնում է թեմը, բարեկարգում եկեղեցիները, դպրոցները, հասարակական ու բարեգործական կազմակերպությունները է՛յ ավելի սերտորեն համախմբելով Հայրենիքի գաղափարի շուրջ, Մայր Աթոռի հովանու տակ:

Հայրենական պատերազմի ժանր տարիներին, երբ ամբողջ աշխարհի վրա ֆաշիզմի վտանգն էր կախված, և երբ ֆաշիստական հորդանների դեմ հերոսական Սովետական Բանակի առաջին շարքերում կռվում էին նաև հայ մարտիկները, Գարեգին Հովսեփյանը, որպես անդամ Հայկական հանձնաժողովի, շրջում էր Սփյուռքի հայության մեջ, ոտքի հանում հասարակական ու բարեգործական կազմակերպությունները ի խնդիր Հայրենիքի պաշտպանության մեծ գործի։ Այս բոլոր աշխատանքներում Գարեգին Սրբազանը ի հայտ բերեց ազնիվ հայրենասիրություն, անկաշառ նվիրվածություն, մեծ ձեռնհասություն և աննկուն կամք։ Եվ կասկած չկա, որ այդ արժանավոր մարդու կատարած աշխատանքների գնահատության

արտահայտությունը պիտի համարել այն, որ 1943 թվականին Գարեգին Սրբազանը ընտրվում է կաթողիկոս Սսի Աթոռի, ուր բացառիկ աշխատանք է կատարում Աթոռը պատշաճ բարձրության վրա դնելու գործում։

Չկա Սսի Կաթողիկոսը։ Նրա մահը ողբում են Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայ հավատացյալները, եկեղեցականները, Ամենայն Հայոց Հայրապետը, Հանգուցյալի աշակերտները։ Բայց մեր ժողովուրդը գիտե վիշտը պահել և չընկճվել, որովհետև հավատացած է, որ կգտնվեն իր ծոցից ելած շնորհալի նոր զավակներ՝ շարունակելու Հանգուցյալի մեծ գործը, հավերժացնելով նրա հիշատակը։

Թող Տերը լուսավորի հայրենասեր և էջմիածնասեր Վեհափառի հոգին։

